

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՎԱՆՔԻ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՎԱՂԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱՍԼԱՆԵԱՆ, ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏԻՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՈՒՑ, ՀԱՐԱՋԱՏԻ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՅ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Աստուծոյ օրհնութեան ներքև կը գտնուին մեր Ս. Եկեղեցին, մեր նուիրապետական Աթոռները և համայն հայ հաւատացեալ ժողովուրդը:

Աստուծոյ օրհնութեան ներքև են նաև Երուսաղէմի Հայոց Առաքելական Ս. Աթոռը և Սրբոց Յակոբեանց միաբանութիւնը:

Ինչքա՜ն ուրախ եղանք, որ անցեալ հոկտեմբերին կարողացանք ուխտի գալ Ս. Քաղաք Երուսաղէմ, համբուրելու մեր Տիրոջ և Փրկչի Ս. Գերեզմանը և Գլխադիր Ս. Յակոբի և Ս. Բեթղեհեմի նուիրական սեղանները:

Ինչքա՜ն ուրախ ու երջանիկ եղանք նաև ողջագուրուելով ամենապատիւ պատրիարք Տ. Եղիշէ արքեպիսկոպոսի և ամբողջ միաբանության հետ, ողջագուրում, որ Մեր հոգին լեցուց սուրբ և մխիթարիչ զգացումներով, վասնզի տեսանք Մենք, թէ բոլորդ լծուած էք Ս. Աթոռիդ հոգևոր և նիւթական շինութեան մեծ աշխատանքին, Ձեր սրբազան պատրիարքի իմաստուն և կորովի ղեկավարութեան ներքև:

Մենք տեսանք նաև Ձեր գործունէութիւնը և Ձեր ստանձնած աշխատանքի բաժինը՝ իբրև լուսարարապետ:

Գնահատելով Ձեր այս բարձր պաշտօնը, Ձեր վաստակը և անցեալ բաղում տարիներու Ձեր նուիրեալ ծառայութիւնը Հայ Եկեղեցիին, հայ Երուսաղէմին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, հոկտեմբեր 19-ին Ձեզ շնորհեցինք **արքութեան պատիւ,** նաև իբրև Մեր եղբայրական սիրոյ արտայայտութիւն Ձեր անձին հանդէպ:

Սոյն Մեր կոնդակով կը հաստատենք Մեր այդ որոշումը և կը մաղթենք Ձերդ Սրբազնութեան արևշատ ու խաղաղ աշխատանքի բաղում տարիներ, որպէսզի միշտ նոյն նուիրումի ոգիով և քաջակորով գործունէութեամբ, շէն ու պայծառ պահպանէք Հայոց Ս. Յակոբի պատմական և սրբազան Տաճարը, Տաճար սրբութեան, Տաճար լոյսի և յոյսի, և համբաւեալ սրբատեղ համայն հայ հաւատացեալ ժողովուրդի համար:

Մեր Տիրոջ և Փրկչի Իշման Ս. Սեղանէն և Ս. Լուսաւորչի անմար կանթեղէն սիրոյ ողջո՛յն Ձերդ Սրբազնութեան, իբրև վինուորեալ սպասաւոր և արթուն լուսաւոր հայ Երուսաղէմին և Ս. Յակոբին:

«Ողջ լերուք, կօրացեալ Ս. Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ»:

Ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20-ն յունուարի
1964 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԳ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի: